

ՄԵԼԿ

Տարեկան գին 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:
Ուսանողի համարները 5 կոպեկով:

Թիֆլիսի քաղաքի և նրա միջակայի խորհրդարանի մէջ:

Խորհրդարանային օրվան և նրա օրվան
Տիֆլիս. Редакция «Мелк»

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիցուով:

Յայտարարութիւնները համար գնում են
կիրակի օրը 2 կոպեկով:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Ջրաւոր աշակերտների մասին չենք հոգում:—
Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ վերին-Ուսու-
նից: Նամակ Մանկավարժ: Նամակ Խմբագրի:
Ներքին լուրեր:—ՍԲԱՍԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիւր-
քիա: Ֆրանսիա: Գամբետտ և իշխան Բիսմարկ:
Արտաքին լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀՅՈՒ-
ԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՐԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԶԳԱՌՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՁԵՆՔ ՀՈ- ԳՈՒՄ

Օր չէ անցնում որ մեզ մօտ չը ներկայա-
նային մեր քաղաքի այլ և այլ դպրոցնե-
րի աշակերտներ, խնդրելով նրանց ան-
հաշիւ: Մասնաւոր մարդու օյժից վեր է
այդքան բազմութեան չքաւոր աշակերտ-
ներին օգնել: Եւ ահա մենք կրկին և կըր-
կին ստիպված ենք յիշեցնել Թիֆլիսի հա-
տարակույթները, առհասարակ, և մասնաւո-
րապէս հայոց հասարակութեանը, որ ան-
հրաժեշտ է հիմնել մի հաստատ, մշտական
բարեգործական ընկերութիւն, որի նպա-
տակը լինէր օգնութիւն հասցնել ուսում
առնող չքաւոր աշակերտներին:

Շատ գովելի բան է, ի հարկէ, ժամանակ
առ ժամանակ տալ կոնցերտներ կամ ներ-
կայացումներ յօգուտ չքաւոր աշակերտների,
բայց դա անողական բան չէ: Հարկաւոր է
մի ընկերութիւն հաստատ դրամագլխով,
որի տնօրէնութիւնը կը պահի աղքատ աշա-
կերտների յայտնի թիւը, համեմատ հիմ-
նական գումարի մեծութեան:

Մեր բոլոր թէ պետական և թէ ազգա-
յին ու մասնաւոր դպրոցների չքաւոր ա-
շակերտները ոչինչ հաստատ աղբիւր չու-
նեն իրանց օրական հացը հայթայթելու:
Որքան որք, անօգնական, անտէր տղաներ
կան նրանց մէջ, մասնաւոր օտարաքաղա-
քացի աշակերտներից, որոնք ոչինչ ազգա-
կանութիւն չունեն Թիֆլիսում: Բոլոր հա-
տարակական կապերից զուրկ, նրանց ապ-
րելու միակ միջոցը, իրանց ուսումը շարու-
նակելու համար, մասնաւոր աների մէջ դա-
սաւորութիւնն է: Բայց վերջին ժամանակ-
ները մեր դպրոցների չքաւոր աշակերտնե-
րը իրանց ապրուստը պահպանելու համար
անհրաժեշտ դասերն էլ չեն կարող ձարել:
Պատճառը շատ հասարակ է. մասնաւոր
աների մէջ դաստաւորութիւնը իրանց ձեռքը
պցնելն աշակերտներից ամենաուսուցողը,
որոնք Թիֆլիսում ունեն հասարակական և
ազգականական մեծ կապեր, որոնք, չը
նայելով որ այդպէս էլ ապահոված են նիւ-
թական կողմից, տալիս են դասեր մասնա-
ւոր աներում, որպէս զի ունենան աւելի
փող իրանց ձեռքում, լաւ հագնվելու, թատ-
րօն գնալու համար:

Աղքատ աշակերտների համար դասեր
տալը ապրուստի անհրաժեշտ միջոց է, կեան-
քի միակ աղբիւր է:—Իսկ նրանց ունեւոր
ընկերների համար շուրջութեանը բաւակա-
նութիւն տալու մի յանցաւոր պահանջ է:
Չքաւորները ոչինչ կապեր չունեն հասարա-
կութեան մէջ, իսկ նրանց ունեւոր ընկերնե-
րը, օգուտ քաղելով իրանց կապերից, ի-
րանց աջող գիւրքից, բոլոր մասնաւոր դա-
սերը իրանց ձեռքն են դնել:

Ուրեմն մեր հասարակութեան մէջ դեռ
դպրոցից սկսած չը կայ ոչինչ համեմա-
նութիւն, ոչինչ ընկերակցութիւն ընկեր-
ների մէջ: Ունեւորները, ոյժ ունեցողները
զրկում են իրանց ընկերներին մասնաւոր
դասերից: Փոխանակ, ընդհանրապէս, որտեղ
հարկաւոր է լինում մի տնային վարժապետ,
իրանց չքաւոր ընկերոջ առաջարկելու,—
ունեւոր ընտանիքների որդիները մտածում
են. «Ի՞նչի պիտի նրան թողնեմ այդ դա-
սը, երբ որ ամիսը մի քանի րուբլ աւելի
ունեւորի, ևս կը կարողանամ ֆայետոնով
մանկալ, թատրօն գնալ, աւելի լաւ հագնե-
վիլ»:

Մի հարուստ գիմնազիստի համար ամ-
սական մի աւելորդ տաս, տասն և հինգ
րուբլ շուրջութիւն է, իսկ նոյն անշան-
գումարը մի որք, չքաւոր աշակերտի հա-
մար՝ կատարեալ ապահովութիւն է ամբողջ
ամսվայ համար: Մեծ օգնութիւն կը լինէր
մեր դպրոցների չքաւոր աշակերտների հա-
մար, եթէ իւրաքանչիւր դպրոցի աշակերտ-
ների մէջ հաստատվէր համեմատութիւն,
եթէ ունեւոր աշակերտները միշտ իրանց
չքաւոր ընկերներին առաջարկէին մասնա-
ւոր աներում դաստաւորութիւն անելու:

Բայց այդ բաւական չէ: Հարկաւոր է
վերջապէս մտածել մի հիմնաւոր բարեգոր-
ծական ընկերութիւն հաստատելու վրա,
որ, որքան հնար է, չունենար չափից դուրս
լայն, ընդարձակ, երեւակայական նպատակ-
ներ, այլ առժամանակ, համեստ, սահմանա-
փակ դիտաւորութիւններ:

Առանց նիւթական օգնութեան մեր ու-
սում առնող չքաւոր երիտասարդութիւնը
փշանում է, կորչում է, աներեւակայելի ջան-
քեր անելով ուսում ստանալու, ասարկելի
ընթացքում իւրաքանչիւր օր պատերազմե-
լով կենսական ամենաանհրաժեշտ կարիք-
ների դէմ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

Սեպտեմբերի 28-ին

Այս նամակով ուղարկում եմ ձեզ մի թերթիկ
ձեր գրադարի, որի երկրորդ երեսի վրա կը գտ-
նէք երկու տող հայոց նշանագրերի օրինակներ:
Այդ թերթիկը եւ վեր արայ մի հին գրադար
աւետարանից, այժմ ուղարկում եմ ձեզ մեր հայ
հնագէտներին ցոյց տալու, զուգէ դա մի փոք-
րիկ գաղափար կը տար մեր հին նշանագրերի
մասին:

Նշանագրերի ներքե հայկական նոր տառերով
գրված է՝ «Չաքարայ ծառայ սուրբ Գը-
րիգոր Լուսաւորչին, սուրբ Զովանէս
Մկրտչին»: Իսկ այդ տողերի իւրաքանչիւր
բառի վրա գրված են նրա համապատասխան նը-
շանագրերը: Պէտք է նկատել, որ ամեն մի բա-
ռը ներկայացնում է մի առանձին տեսակ նշա-
նագրեր: «Չաքարայ» բառը սեպպաձև տառե-
րով է գրված. «ծառայ» բառը մի առանձին
տեսակ սեպպաձև է. իսկ «սուրբ» և «Գրի-
գոր» բառերը սեպպաձևեր չեն, այլ մի այլ տե-
սակ նշանագրեր. «լուսաւորչին» բառը
նոյնպէս մի այլ տեսակ սեպպաձև է: Մնացեալ
«սուրբ Զովանէս Մկրտչին» բառերը հա-
յոց ծածկագրութեան օրինակներ են: Մի խօս-
քով, այդ երկու տողը բաւական պարզ գաղա-
փար է տալիս, թէ քանի տեսակ նշանագրեր էին
գործածում մեր նախնիքը:

Դար է տալիս, թէ քանի տեսակ նշանագրեր էին
գործածում մեր նախնիքը:

Թերթիկի առաջին երեսի վրա գրված յիշա-
տակարանից երեսու է, որ յիշեալ աւետարանը
գրված է եղել վանայ երկրի (Աւանց *) գիւղում
(այսինքն հայոց բնակազանների հայրենիքում)
հայոց ու իւ. ր. (1048) թաւանին, սուրբ Զով-
հանէս Մկրտչի և սուրբ Գրիգոր Լուսաւորչի
վանքում: Ուրեմն 283 տարի հնութիւն ունի:
Երեսու է, որ 283 տարի առաջ հայոց հին բնե-
ւորները ոչ միայն ընթերցանելի էին մեր
գրադէտներին, այլ մինչև անգամ գործածութեան
մէջ էին: Ինչու չը մտածել, թորեւային, որ մի
և նոյն երկրիցն էր, ծանօթ չէր բնակազանների
ընթերցմանը և իւր պատմութիւնը գրելու ժա-
մանակ օգուտ չը քաղեց նրանցից:

Թէ հայոց հին բնակազանների ընթերցումը ծա-
նօթ է եղել մեր նախնիքներին, մինչև անգամ
երկու, երեք դար առաջ, դա համար ուրիշ ա-
պացոյցներ եւ կան: Մի պարուն ինձ խոստացել
է տալ մի մագաղակեալ թերթ, որ դուրս է բե-
րել մի հին բառարանից, որի վրա գրված են
բնակազանների այբուբենարանի բացատրութիւն-
ները: Երբ ձեռք բերեմ, կուղարկեմ ձեզ:

Եղանակի վատութեան պատճառով երկու օր
աւելի մնացի Աղուխում: Այսօր դուրս եմ գը-
նում դէպի Պարսկաստան:

Իսֆիփ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Հոկտեմբերի 4-ին

Այս տարի, զինի աւարտումն աւագագ հարգաւոր-
նութեանց, Լազարեան ճեմարանիս կառավարիչ
(գլխավոր) պարոն Գրիգորով, իր ծերութեան
պատճառով հրաժարական էր տուել, իսկ նրա
տեղ նշանակել և հաստատվել է, ինչպէս յիշված
էր «Մշակ» լրագրի էջերում, ճեմարանի նախկին
տեսուչ (ինսպեկտոր) պարոն Քանանեանց: Այս
պարոնը մտած չը մտած իր պաշտօնի մէջ, ամեն
հին կանոնները ու կարգերը վերցրեց ու սկսեց
զանազան ընթերցումներ մտցնել ճեմարանի մէջ:
Պարոնի ընթերցումները վրա աւելորդ եմ համա-
րում խօսել, որովհետեւ չունեն ամենին յիշելու
արժանաւորութիւն: Լաւ կը լինէր որ մեծագա-
տիւ պարոնը ընթերցումներով զբաղվելու ու պա-
րագլխու տեղ հոգար աշակերտների աւօրեայ
պիտոյքները: Եւ իմ նամակումս չունեմ դիտա-
ւորութիւն քննելու մեծագաւոր պարոնի ըն-
թերցումները արժանաւորութիւնը, հարկաւորութիւն
էլ անգամ չը կայ. սակայն խորհուրդ կը տալինք
զբաղվել նրանով, որ գլխաւորապէս է՝ ման-
կահասակ աշակերտների ուսուցիչներով, որպէս
զի մանուկները ու պատանիները չը վնասվին
ու չը տկարանային չոր ու ցամաք խմորովն կե-
րակութեանց: Շատ սակաւ կը տեսնէք ճեմարա-
նի մէջ առողջ ու զոյնով տղաներ, աշակերտ-
ների մեծ մասը դեմքերը դուրս, դեղնաւած են:
Սրա պատճառը, ի հարկէ, գլխաւորապէս ու-
տեղիքն է և այն փչացած օդը, որ աշակերտները
միշտ կը ներնչեն դասարաններին, ննջարաններին
և սեղանատան մէջ, իսկ մեծ դահլիճի օդը, որ-
տեղ մանր աշակերտները կը խաղան, անտանե-
լի է, փոշին այն աստիճան լցվում է դահլիճի
մէջ, որ անկարելի է անցիկեալ այդ տեղից ա-
ռանց խեղդվելու: Կարծեմ սրա առաջը առնելու
է: Թէչը նմանապէս, որ կը տան աշակերտնե-
րին առաւօտ և երեկոյ, լաւ էր որ ամենին
չը տային, այն աստիճան անհամ ու պղտոր է:
Չը գիտեմ, արդեօք ինչ է պատճառը, որ պա-
րոն Քանանեանց այդ ամենը մոռացման է տա-
լիս և ուրիշ աննշան բաներով է զբաղված: Կար-
ծեմ որ մեծագաւոր ուսեալ պարոնը համոզված
է, որ «sana mens in sano corpore», ուրեմն չէ

*) Աւանց գիւղը գտնվում է վանայ լճակի
ափին, վան քաղաքից 20 վերստ հեռաւորու-
թեան վրա և լճակի նաւահանգիստն է:

Կարելի միայն և եթ զօրեւ ու հետեւ ուսմանը:
Հրաւիրում ենք ազնիւ պարոնի ուշադրութիւնը
այդ բանի վրա, մեծայայտ ենք որ մեր ասածը
չի լինի ձայն բարբառող յանապատի:

Տեսչի տեղ դեռ հաստատապէս չէ նշանակված
ոչ ոք, ուստի առ այժմ վարում է տեսչի պաշ-
տօնը վարժապետներից մէկը. քանի մի աղբիւր-
ներից լսած ենք, որ նշանակվելու է հայազգի
պրօֆէսոր պարոն Ներսիսեանը: Յանկայի է որ
այդ բանը իրագործվի:

ՆԱՄԱԿ ԽՐԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 12 հոկտեմբերի

«Մշակ» ազգային լրագրից նախորդ համար-
ներից միոյն մէջ՝ պատիւ ունեցալ կարգալ՝ ձեռ-
այն թանգազին առաջարկութիւնը, որ բացառ-
ձակապէս երախտապարտ էր կայացանում ինձ՝
Անույ աւերակների լուսաւոր պատկերացա հրա-
տարակութեան համար, ձեռ լրագրի միջոցաւ
ստորագրութիւն բանալով: Մոյն առթիւ ան-
կեղծ զգացմամբ կը փութամ մատուցանել
ձեզ իմ յարգալից շնորհակալութիւնը՝ ձեռ
ազնիւ պաշտպանութեան մասին:

Արդարեւ հայրենի աւերակաց այս նուիրական
և սուրբ նշխարաց տեսարանները, պէտք էր
փոքր ի շատէ ամեն բարեկիրթ ազգային համար՝
զբաւիչ և հրապուրիչ լինէր և ազգայնութեան
եթէ ոչ ամբողջութիւնը, գտնէ զարգացեալ և
ուսեալ դասը պէտք էր միաբերան յարգել, դը-
նահատէր և ջանար գնահատել տալ այլոց բայց
ոչ, ցաւօք սրտի, այնպիսի յարգելի անձնաւո-
րութեանց հազիւ երեքին պատահեցալ: Եւ արդ
համոզված եմ, որ մամուլի միջոցաւ թերեւ կա-
րելի լինի սոյն գործի վրա, ազգայնոց լուրջ
ուշադրութիւնը՝ և հետաքրքրութիւնը՝ հրաւրել,
որոյ համար՝ անգոր և անխզու եղան, թէ տա-
րիներով անընդհատ մեծ ծախքերս՝ և թէ սիրա
մաշող աւերակաց՝ մաղձոտ ամալութեան մէջ,
առողջութիւն թիւնաւորող դառն աշխատու-
թիւններս:

Այո, փտած եմ ձեռ ազնիւ պաշտպանու-
թեան, և եռանդուն տնօրէնութեանը. և մասնա-
ւորապէս թէ՛ յուսալիւր եմ հայոց դէպի ձեզ ունե-
ցած այն համակրութեանը, որ կարողացել էր
ձեռ անձուներ և ազգօգուտ աշխատութեանը
գրաւել: Ուստի գործիս յաջողութեանը աներկ-
բայ եմ. ոչ այնքան ինձ, որքան անչէլ պան-
լու համար մեր նախնեաց չիշեալ հանձնար ու
ճարտարութիւնը, որք թէպէտ լուռ և անձայն,
սակայն միշտ բարձրաձայն վիճ և ճարտար խօ-
սեն մեր սրտերի հետ՝ և որք ի հնորս մեր ան-
վայել անտարբերութեան, օր աւուր տապալին և
անհետանան, որպէս թէ երբեք եղած չը լի-
նէին:

Մինչ արդ՝ իմ անգոր ջանքս էր այդ աւերակ-
ների գտնէ արժանաւորագրութիւնը՝ մի քանիսին
յիշատակները՝ անջնջելի պանիւ լուսատիպ պատ-
կերներով և միանգամայն գիտնականաց ուսում-
նասիրութեան, և ազգային կրթութեան ու
քաղցր յիշատակաց նիւթ մատակարարել:

Ահա այս սիրալիւր նպատակաւ վառված աշ-
խատեցալ, քանի որ դեռ չէին սպառած դրա-
մական միջոցներս. և դարձեալ այսուհետեւ՝ փա-
փազելի է ինձ նոյն և նման աւերակաց աշխար-
հին մէջ դեղերել. եթէ ի հնորս ձեռ՝ և ազգային
անհատների խնամքը, տարածվին հայոց հին
մայրաքաղաքի աւերակաց տեսարանացոյց պատ-
կերների փոքրաթիւ հաւաքածոյքը: Յայնժամ՝
առիթ շնորհված կը լինի ինձ՝ նորանոր հայրե-
նախոյզ ճանապարհորդութեանց, որ կենացա
սիրելի զբաղմունքն ու հոգը եղած է՝ և պիտի
լինի միշտ:

Յ. Բիրբեկեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր աշխատակից պ. Բաֆֆի իր ճանապարհորդութեան ժամանակ գտել է մի գրչագիր աւետարանի մէջ հայոց հին բնագրերի մի քանի օրինակներ, որոնց ընթերցանութեան եղանակը հայոց մետրոպոլիտան տառերով գրված է նոյն իսկ բնագրի տողերի տակ: Պարոնը ուղարկել է մեզ իր գրեւոր թիֆլիսի հնագիտական ժողովին ներկայացնելու համար, բայց դժբաղդաբար ժողովը արդէն վերջացած էր և հնագէտները զննացած էին, երբ մեր աշխատակցի նամակը ստացանք:

Երկու օր առաջ հրատարակվեցաւ թիֆլիսում ռուսաց «Вѣстникъ Кавказа» լրագրի մի համար, հրատարակութեան իրաւունքը չը կորցնելու համար:

ԽԱՐԱԿՈՎԻՑ պ. բժշկապետ և պրոֆեսոր ՇԵՐԹԵԱՆԵՐ ուղարկում է մեզ հետեւալ մի քանի տողերը, որ խնդրում է մեզ տպագրել մեր լրագրի մէջ. «Բանիցս պատահեցաւ որ խարկով եկող հայերը, չը գիտենալով իմ հասցէս, հարկադրված եղան դիմել ուրիշ բժշկներին: Այս պատճառով պատիւ ունեմ խնդրել ձեզ տպել ձեր պատուի լրագրի մէջ իմ հասցէս, որ հետեւեալն է. Харьковъ, Театральная площадь, домъ Ян-Ковича.»

Ստացանք ՇԱՄԱԽՈՒՅՑ պ. Սարգիս Համբարձումեանցից 15 րուբլ, բաժանորդագիրն «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի համար, Շամախու մի քանի հայ-աւետարանականներին:

Ստացանք ԱՍՏԻՍԻԱՆԻՑ 8 րուբլ բաժանորդագիրն «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի հետեւալ անձինքներին. Յովհ. Սթոբեանց, Ստեփաննոս Նազարեանց, Գրիգոր Ակուբեանց, Գէորգ Սթոբեանց, օր. Հովհաննիս Սթոբեանց, Սալատուր Միրմանեանց, Գրիգոր Միսնիկեանց և Սալատուր Ֆարքիսեանեանց: Առաջվայ բաժանորդական փողերի հետ կանխ 983 րուբլ 13 կոպ.:

ՂԱԼԱՐԻՑ հետեւալ բաժանորդներ են գրվել «Ժուրնալ դ'Օրիան» լրագրին, ուղարկելով մեզ 17 րուբլ. Թ. Կաճկաճեանց, Ա. Կաճկաճեանց, Ն. Անանեանց, Մ. Անանեանց, Ռ. Միշկելեանց, Ա. զամ վարդապետ, Ե. Թաւարեղեանց, Բ. Աստուածատուբեանց, Խ. Ղորղանեանց, Ա. Թանդոյեանց, Գ. Առաքելեանց, Մ. Թումանեանց: Առաջվայ փողերի հետ կանխ 1000 ր. 13 կոպ.:

Մինչև այժմ պ. Գրեքեանի ֆոտոգրաֆիական ժողովածուին գրվեցին «Մշակի» խմբագրութեան մէջ երեք անձինք. Խտաւանեանց և երկու եղբայրներ Արծուրի:

Երեքշաբթի օր, 20-ին հոկտեմբերի թիֆլիսի ժողովարանում լինելու է կոնցերտ յօդուտ չընտր գիմնապետներին: Կոնցերտին կը մասնակցեն պ. պ. Ալիխանով, Կորգանով, Օպոչինին, Աղաման, և տիկիններ Խվանովսկի, Շիդովսկի և օր. Գարագաշեան:

Կիրակի, հոկտեմբերի 11-ին առաւօտեան ժամի 11-ին պատարագից յետոյ Հաւաքարի Ս. Մարիամեան օրհորդական դպրոցը կատարեց իր գոյութեան տասն և միամեայ տարեդարձի հանդէսը: Ներկայ էին այդ հանդիսին ի միջի այլոց բաղադրադուստ պ. Մատիւով, պ. Բժշկապետ Միքայէլ Շահ-Պարոնեանց, պ. Իւզրաշեանց և մեծ բաղմութիւն, մանաւանդ կանանց սեւի: Պ. Կ. Թէմուրազեանց, որպէս ներկայացուցիչը դպրոցի կարգաց դպրոցի ուսումնական հաշիւը անցեալ ուսումնական տարվայ և մի գաղափար առեց դպրոցի ներկայ դրութեան մասին, որից երեւցաւ, որ դպրոցը ներկայումս արդէն երեք դաստառն ունի 73 աշակերտութիւնով և եօթ գործող անձինքներով: Պարոնը վերջացրեց իր ճառը ուրախութեան յայտնելով որ ինքն, ընդհանրապէս լինելով և գլխաւորապէս Հաւաքարում գործելով, վերջին երկու, երեք տարիներում նկատում է թիֆլիսի այդ քաղաքամասի մէջ մի նշանաւոր բարոյական և մտաւոր շարժում, նկատում է ինքնաճանաչութեան և ինքնագիտակցութեան հաստատ նշոյլներ: Արժ. տէր Թովհաննէս Մարտիրոսեան, որպէս դանձապահ, ներկայացրեց անցեալ տարվայ երեւ-

մտից հաշիւը, որից երեւցաւ որ դպրոցի դանձարանը, մի անշան տարբերութիւն է ունեցել ծախսի և մուտքի մէջ, այն է 6 րուբլ և մի քանի կոպէկ: Գալոցի վարչութեան կողմից իր հիմնադիր Խորէն վարդապետ Ստեփանէին ուղարկված հեռագրին, այդ վերջինը պատասխանել էր հետեւալ հեռագրով: «Շնորհաւորում եմ և ցնծում եմ. թող երկնային Ուսուցիչը օրհնէ բոլոր աշակերտութիւններին և դպրոցի բոլոր բարեկամներին յաջողութեամբ շարունակելու այդ ամենալուսնալ գործը: Աստուած կը ինչէ այն աղնիւ մշակներին, որոնք հոգում են իրանցից փոքրերի վրա: Աղօթում եմ Աստուծուն, որ ձեր ձեռքով դատարարված հայ օրհորդները ապրեն ընտանիքում այնպէս, ինչպէս սիրտը կըրծաւ: Յիշեցէ՛ք որ ամենաբարձր արժանաւորութիւնը բաղդաւոր քրոջ համար պէտք է լինի չը մոռանալ իր աղքատ և հիւանդ քրոջը:» Հանդէսը վերջացաւ աշակերտութիւնների ձեռագործների վիճակախաղով, որից գոյացաւ մօտ 163 րուբլ գումար:

ՂԱԼԱՐԻՑ մեզ գրում են: «Մեզանում այդպէս դարձաւ վերջացաւ բաւական լաւ: Բայց որովհետեւ մեր նախապետական ձեռով լաւաւորութեան միջոցով հետեւեալ իրանց յիմարութիւնից այս տարի Նիժնի-Նովոգորոդի ամենալաւաւորում իրանց սպասած օրուտը չեն ստացել, ուստի ուղղումն նրանով իրանց վարձատրել, որ խեղդում են խեղճ այգեւեղերին և զինու գինը այնքան ցած է, որ հաղւթ թէ խեղճ այգեւեղերը կը հանեն իրանց ծախսած փողը:»

ԱՅԼԱՐԻՑԱՆԻՑ մեր թղթակիցը գրում է մեզ: «Վերջին օրերս մանկանց տարափոխիկ հիւանդութիւնը, որի մասին գրած եմ ձեզ արդէն, կարծես աւելի էլ սաստկանում է: Առաւօտից մինչև երեկոյ եկեղեցու դանդաղ իր տեսքը ձայնը հնչեցնում է և վհատեցնում է կենդանի մշտնապաճ մարդկանց: Հետեւալ թւերը ցոյց կը տան իմ տառիս ճշմարտութիւնը: Օգոստոս ամսին մեռած են 12 մանուկներ, սեպտեմբեր ամսին քսան հոգի, իսկ հոկտեմբերի 1-ից մինչև այսօր, այսինքն տաս օրվայ ընթացքում մեռել են 17 մանուկներ: Այս համաճարութեամբ, ուրեմն, այս ամիսը կարող են 51 մանուկներ վախճանվել: Գրեթէ մի տուն չը կայ, որի մէջ գտնէ մի հիւանդ մանուկ չը լինի: Այդ տեսովում և և տեղիս աղգային ուսումնարաններում: Վերառենք արական դպրոցը. ստորին պատարաստական ուսումնարանի 53 աշակերտներից 12 հոգի հիւանդ են, միջին պատարաստականի 55 աշակերտից 4 հիւանդ են, միայն առաջինում հիւանդ չը կայ:»

Պ. Սարգսեանց, Մոսկվայից, խնդրում է մեզ տպել հետեւալ նամակը: «Թոյլ տուէ՛ք, պ. խմբագիր, ձեր պատական լրագրի միջոցով հրատարակել, որ 100 օրինակ պ. Շահագրեանի շարադրութեան «Հրապարակախօս ձայն» ես իմ կողմից ձրաբար ընծայում եմ հայոց դպրոցներին և մասնաւորապէս նրանց: Ցանկացողները կարող են ստանալ երկու և աւելի օրինակ մեր կոնտորայից, Մոսկվայում, հետեւալ հասցեով: «Въ Бакинскій торговый домъ Тагіева и бр. Саркисовыхъ, Москва, на Мясницкой.»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԻՔԻԱ

«Times» լրագրին Կ. Պօլսից հեռագրում են հետեւեալը: Ռուսաց Ֆինանսների մինիստրութեան բարձր պաշտօնեաներից մէկի գալը, երեւի, կը շտապեցնի Ֆինանսական բանակցութիւնների ընթացքը Բ. Գրան հետ: Ռուսաց դեսպան պ. Նովիկով, խիստ խօսքերով պահանջեց անյապաղ պատասխան տալ իր գրութեանը, և Բ. Գրանը չը գիտէ թէ ինչպէս դուրս գայ այդ դժուար դրութիւնից, որը ինքն ստեղծեց հոկտեմբերի 3-ի իր գրութեամբ: Հաշիւով այդ գրութեան մէջ այն եկամուտները, որ նա կարող է տալ իր պարտատէրերին, և յայտնելով որ Ռուսաստանին զինուորական կոնտրիբուցիայի վճարելը կը մտնի այդ հաշիւ

մէջ, Բ. Գրանը չէ կարող մերժել պ. Նովիկովի պահանջները, որ վերջինիս եկամուտները մի քանիսը որոշվեն մասնաւորապէս կոնտրիբուցիան վճարելու համար: Անուղղակի հարկերը և Արեւելեան Բուժկայից ստացած եկամուտի աւելորդը առաջարկված են թիրքաց օբլիգացիաների տէրերին բաւականացնելու համար: Կիպրոս կղզուց ստացած եկամուտի աւելորդը անգլիական կառավարութիւնն է վերցրել, նշանակում է, Ռուսաստանին բաւականացնելու համար բոլգարական հարկն է մնում: Ռուսաց կառավարութիւնը հաստատում է, որ եկամուտի այդ աղբիւրը, որը մինչև պատերազմը գոյութիւն չուներ, չէ կարելի թիրքաց պարտատէրերին բաւականացնելու համար գործադրել: Ռուսաստանը, երեւի կը համաձայնվել ընդունի բոլգարական հարկը դոնէ կոնտրիբուցիայի մէկ մասը ստանալու համար, բայց բանը նրանումն է, որ հէնց այդ հարկը թիրքիւն չէր կամենայ ուսանելին յանձնել: Ճշմարիտ է, նա կարող էր կոնտրիբուցիան վճարելու համար իր ուրիշ եկամուտներից մէկը տալ, բայց դա հոկտեմբերի գրութեանը հակառակ կը լինէր, իսկ սուլթանը վստահում է յետ կանգնել իր այդ գրութիւնից իր ուրիշ պարտատէրերին չը քաջալիւրդը համար նոր պահանջներ անելու: Գրանը է նախադուշակի, թէ ինչպէս Բ. Գրանը կը դուրս գայ այդ դժուարութիւններից: Ռուսաց գրութեան առաջին մասում բոլգարական հարկի վրա ցոյց է տուած, որպէս եկամուտի այնպիսի աղբիւրի վրա, որը Բ. Գրանը իրաւունք չունի գրաւ դնել իր պարտատէրերի մօտ:

ՖԻՆԱՆՍԻԱ

Գրեթէ, որ հրաւիրել էր իր մօտ Գամբետտային, վերջինիս պցելութեան ժամանակ խօսեց նրա հետ ընդհանրապէս քաղաքական գործերի դրութեան մասին: Այդ խօսակցութեան ժամանակ Գամբետտա կարծիք յայտնեց, որ աւելորդ է այժմ զբաղվել մանակ, ընդմիջեցի ես, որ դուք չափազանց գրաւիչ մարդ էք, բայց այնու ամենայնիւ դուք յայտնի էք իբրեւ երեւելի քաղաքական գործիչ:—Հաղւթ թէ ինձ գրաւիչ համարեն Գերմանիայի մէջ, պատասխանեց Բիւմարկը և աւելացրեց, այո, ես չէի կամենայ մեռնել Գամբետտային տեսնելուց առաջ: Այդ խօսակցութիւնից յետոյ, երբ ես մնացի իշխան Հոհենլոօէի և բարօն Հօլշտէյնի հետ, ես մտածեցի, որ իշխանի ասածները Գամբետտայի մասին պատահմունք չէին: Ես նրանց յայտնեցի իմ միտքը:—Կարծեմ, նկատեցի ես, որ իշխանի երկու անգամ կրկնած ցանկութիւնը Գամբետտային տեսնելու մասին հասարակ պատահմունք չէր: Իշխանը գիտէ, որ ես ծանօթ եմ Գամբետտայի հետ և որ փարիզ վերադառնալուց յետոյ ես նրա հետ կը տեսնվեմ: Նա չը խնդրեց չը պատմել Գամբետտային իր ասածները նրա մասին և կարծես նա ցանկանում է, որ ես բոլորը հաղորդեմ Գամբետտային: Գուք ինձանից լաւ էք ծանաչում կանցներին, ի՞նչ էք կարծում, արդեօք հարկաւոր չէ նրա և Գամբետտայի մէջ մի տեսակցութիւն կայացնել: Ես կը նախապատրաստեմ տեսութիւնը, իսկ դուք բանակցութիւնները կատարեցէ՛ք: Իշխան Հոհենլոօէի և բարօն Հօլշտէյնի համաձայնեցին ինձ հետ և մենք պատրաստվում էինք գործողութեան նախադիժը կազմել: Միւս օրը ես այցելեցի բարօն Հօլշտէյնին, հաւատացած լինելով, որ նա արդէն տեսնվել

Գրեթէ, «La Paix» լրագիրը առաջարկում է Գամբետտային ամբողջ կեսեղի համար սենատոր նշանակել և յանձնել նրան մինիստր-նախագահի պաշտօնը, եթէ պատգամաւորների ժողովը չը վաւերացնէ նրա ընտրութիւնը: Հաւատացնում են, որ Գրեթէ առաջ էլ հակված է եղել յանձնել Գամբետտային ներքին գործերի մինիստրութիւնը, միայն թէ որքան կարելի է նա հեռու մնար արտաքին գործերի միջամեղուց: Այդպիսի առաջարկութիւն մինչև անգամ չէ արված Գամբետտային, որովհետեւ դա հակառակ է նրա օրինաւոր ինքնապիտանութեանը:

Հոկտեմբերի 11-ին կայացաւ Ֆրանսիական մինիստրների խորհուրդը, որի ժամանակ գեներալ Ֆարը կարգաց իր գեկուցումը հիւսիսային Աֆրիկայի գործերի դրութեան մասին: Այդ գեկուցումից երեւում է, որ

արշաւանքը Կերուանի վրա յետաձգված է: Բարտեռեմի Սենտ-Լյեբ հաղորդեց, որ մի քանի Ֆրանսիական և անգլիական զրահակիր նաւեր ուղարկված են Եգիպտոս և զրա պատճառն այն է, որ Բ. Գրանը ուղարկել է Եգիպտոս իր հաւատարմատարին: Եթէ վերջինները յետ կը կանգնեն, այդ նաւերը չեն երեւայ Ալեքսանդրիայի առաջ: Առեւտրական մինիստրի գեկուցման համեմատ բանակցութիւնները Անգլիայի հետ առեւտրական նոր դաշնագրի մասին կարող են ցանկալի նպատակին հասցնել:

ԳԱՄԲԵՏՏԱ ԵՒ ԻՇԽԱՆ ԲԻՍՄԱՐԿ

Փարիզում նորերումս լուր տարածվեցաւ, որ Գամբետտա գաղանի ուղևորվել է Գերմանիա իշխան Բիւմարկի հետ տեսնվելու համար: Այդ առիթով «Times» լրագրի փարիզի թղթակիցը հաղորդում է հետեւեալը: «1878 թւականի յուլիսին ես մի երկար խօսակցութիւն ունեի իշխան Բիւմարկի հետ, որ այդ օրը շատ լաւ էր տրամադրված և երկար խօսում էր: Մեր խօսակցութիւնը կատարվում էր գերմանական դեսպան իշխան Հոհենլոօէի և բարօն Հօլշտէյնի ներկայութեամբ, որ վայելում էր Բիւմարկի կատարեալ հաւատարմութիւնը և, իբրեւ փարիզի գերմանական դեսպանատան քարտուղար, շատ լաւ ծանօթ էր Ֆրանսիական քաղաքական գործերի դրութեան հետ: Իշխան Բիւմարկ խօսում էր զանազան առարկաների մասին. կոնգրեսի, պատերազմի, Ֆրանսիական քաղաքական գործիչների մասին և այլն: Այդ ժամանակ մէկը Գամբետտայի անունը յիշեց: «Գամբետտա, բացականչեց իշխանը, ահա մի մարդ, որին ես կուզենայի տեսնել իմ մահահանգից առաջ: Ինչ ուղում են ասեն, բայց նա երեւել մարդ է: Նա իր բոլոր հայրենակիցներից բարձր է: Ասում են, որ նա շատ գրաւիչ մարդ է, մի և նոյն ժամանակ ամենաքաղաքական Գամբետտա կարծիք յայտնեց, որ աւելորդ է այժմ զբաղվել մանակ, ընդմիջեցի ես, որ դուք չափազանց գրաւիչ մարդ էք, բայց այնու ամենայնիւ դուք յայտնի էք իբրեւ երեւելի քաղաքական գործիչ:—Հաղւթ թէ ինձ գրաւիչ համարեն Գերմանիայի մէջ, պատասխանեց Բիւմարկը և աւելացրեց, այո, ես չէի կամենայ մեռնել Գամբետտային տեսնելուց առաջ: Այդ խօսակցութիւնից յետոյ, երբ ես մնացի իշխան Հոհենլոօէի և բարօն Հօլշտէյնի հետ, ես մտածեցի, որ իշխանի ասածները Գամբետտայի մասին պատահմունք չէին: Ես նրանց յայտնեցի իմ միտքը:—Կարծեմ, նկատեցի ես, որ իշխանի երկու անգամ կրկնած ցանկութիւնը Գամբետտային տեսնելու մասին հասարակ պատահմունք չէր: Իշխանը գիտէ, որ ես ծանօթ եմ Գամբետտայի հետ և որ փարիզ վերադառնալուց յետոյ ես նրա հետ կը տեսնվեմ: Նա չը խնդրեց չը պատմել Գամբետտային իր ասածները նրա մասին և կարծես նա ցանկանում է, որ ես բոլորը հաղորդեմ Գամբետտային: Գուք ինձանից լաւ էք ծանաչում կանցներին, ի՞նչ էք կարծում, արդեօք հարկաւոր չէ նրա և Գամբետտայի մէջ մի տեսակցութիւն կայացնել: Ես կը նախապատրաստեմ տեսութիւնը, իսկ դուք բանակցութիւնները կատարեցէ՛ք: Իշխան Հոհենլոօէի և բարօն Հօլշտէյնի համաձայնեցին ինձ հետ և մենք պատրաստվում էինք գործողութեան նախադիժը կազմել: Միւս օրը ես այցելեցի բարօն Հօլշտէյնին, հաւատացած լինելով, որ նա արդէն տեսնվել

է իշխան Բիսմարկի հետ և նրան բոլորը պատմել է: Բարձր հաղորդեց ինձ, որ ես ձիւղ եմ հասկացել իշխանի ասածներին նը պատակը և որ ես կարող եմ բանակցութիւններ սկսել այդ տեսութեան վերաբերութեամբ, որ պէտք է կատարվէր Արսիւն գետի մէջ: «Բայց դուք ի հարկէ հասկանում էք, աւելացրեց նա, որ այդ տեսակցութիւնը կարող է նշանաւոր հետեւանքներ ունենալ, ուրեմն պէտք է մեծ գզուշութեամբ գործել: Բիսմարկ համազօրեւ է, որ շուտով Ֆրանսիայի մէջ իշխանութիւնը Գամբետտայի ձեռքը կանցնի և այդ իշխանութիւնը վճռողական բնաւորութիւն կունենայ: Բիսմարկ խաղաղութիւն է ցանկանում և կամենում է մօտ ծանօթ լինել այն մարդու հետ, որից շուտով կախում կունենան պատերազմը և խաղաղութիւնը: Բիսմարկ կամենում է անձամբ իմանալ Գամբետտայի գաղտնի մտքերը դըրա մասին: Պէտք է մօտենցնել այդ երկու պետական գործիչներին և հարկաւոր է, որ նրանք միմեանց չը հանդիպեն իրեն թըշնամիներ: Անցեալը թող այնպէս էլ մնայ, այժմ պէտք է մտածել տպագրւոյ մասին և անհրաժեշտ է բոլոր այն անյարմարութիւններին առաջն առնել, որոնք կարող են վնասել այդ տեսակցութեան նշանակութեանը, որի ժամանակ չը պէտք է խօսվի զանազան համաձայնութիւնների և այժմեան գաղափարների փոփոխութեան մասին: Անհրաժեշտ է լաւ իմանալ, որ ոչ կանցնիլը, ոչ գերմանական կայսրը և ժողովուրդը չեն թող տայ մինչև անգամ տեսական դատողութիւններ կատարված այն անցքերի մասին, որոնց պատճառով Ֆրանսիան ծածկվեցաւ գերմանական զինուորների դիմադրութիւն: Այնու ամենայնիւ այդ երկու երկրների մարդկեանց տեսակցութիւնը կարող է ահագին օգուտներ տալ խաղաղութեանը: Ես վճռեցի այս բոլոր խօսակցութիւնը բառ առ բառ պատմել Գամբետտային: Բայց առաջին տեսակցութեան ժամանակ մենք խօսում էինք Բերլինի կոնգրեսի մասին: Վաղդինգտոնի դեռ չէր վերադարձել Բերլինից և ես առաջինն էի, որ կարող էի տեղեկութիւններ հաղորդել կոնգրեսի մասին: Իմ խօսակցութիւնը Բիսմարկի հետ ես կարողացայ մի շարքովի յետոյ միայն Գամբետտային հաղորդել: Իշխան Բիսմարկի լաւ կարծիքը Գամբետտայի մասին նրան շողորդեց, բայց այդ բանը չարգելեց նրան գնահատել տեսակցութեան նշանակութիւնը: Ես ամենից առաջ հարցրի, ի՞նչպէս անել, որ տեսակցութիւնը գաղտնի լինի: «Հաւատացած եղէ՛ք, ասաց նա, որ ես կարող եմ ծածկել իմ հետքերը, և թէ այդ կամենում եմ:» Նորեւրում ես այդ խօսքերը մտաբերեցի, երբ Ֆրանսիական միւնիստրներից մէկը նկատեց ինձ «Ի՞նչ եղաւ Գամբետտա: Մենք նրա հետքը կորցրինք:» Իմ խօսակցութիւնը Գամբետտային հետ բաւական երկար տևեց: Միւս օրը ես տեսնվեցայ իշխան Զօհնիյօէի հետ և յայտնեցի նրան, որ Գամբետտա համաձայն է գաղտնի տեսնվել Բիսմարկի հետ: Բիսմարկ դեռ էլի երկու շաբաթ պէտք է մնար Արսիւնգետի մէջ և Զօհնիյօէ ինչդրեց ինձ այցելել նրան երկու օրից յետոյ բանակցութիւնների հետեւանքները իմանալու համար: Տեսնելով, որ տեսակցութիւնը կարող է շուտով կայանալ և որ մի անշնան խօսք անգամ որ և է կողմից կարող է նըշանաւոր հետեւանքներ ունենալ, ես վախեցայ այն պատասխանատուութիւնից, որ ինձ վրա էի առել: Ես վճռեցի հրաժարվել այդ գործին մասնակցելուց, ներողութիւն ինչք

րեցի իշխան Զօհնիյօէից, չը գնացի այլ ևս Գամբետտայի մօտ, իսկ իշխան Բիսմարկ այդ ժամանակ հեռացաւ Արսիւնգետից: Վերջին ժամանակներում տարածված լուրերը Բիսմարկի և Գամբետտայի տեսութեան մասին ինձ այն եզրակացութեան հասցրին, թէ գործը այնպիսի մարդու ձեռք է անցել, որ չէ վախեցել այդ մեծ պատասխանատուութիւնից:»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Փարիզի լրագիրները հաղորդում են նոր մանրամասնութիւններ Գրեվի և Գամբետտայի մէջ կայացած վերջին բանակցութիւնների մասին: Տեսակցութիւնը, ինչպէս ասում են, շատ սրտառու էր. խօսակցութեան առարկայ էր նոյնպէս արտաքին քաղաքականութեան վերաբերեալ հարցեր. Գամբետտան Գերմանիայի մասին խօսելով ասեց, որ նա «զլինից մինչև ոտը վնասուած է», և յետոյ Ռուսաստանի մասին շատ լաւ խօսեց, ինչպէս հաւատացնում է «Köln. Stg.» լրագիրը: Ներքին գործերի դրութեան վերաբերութեամբ, Գրեվի և Գամբետտայի մէջ համաձայնութիւն կայացաւ: Փարիզում սպասում են լոյզ Գրեվի վրէժն, որը, իբր թէ աշխատում է նախապատրաստել անգլո-ֆրանսիական դաշնակցութեան կապերը, որպէս հակակշիռ երեք կայսրերի դաշնակցութեան: Այդ նախագիծի մասին վաղուց է որ խօսում են, բայց նրա կայանալը շատ կտակած է: Գամբետտան Այդ բանի համար մեծ յոյսեր են դնում Գամբետտայի ապագայ միւնիստրութեան վրա, մասնաւոր, որ վերջինս գիտաւորութիւն ունի անձամբ զեկալարել Ֆրանսիայի արտաքին քաղաքականութիւնը:

—«Neue Freie Presse» լրագիրը հաղորդում է, որ Չեքոսլովակիայի իշխան Նիկոլայ ձանապարհ է բնկնում Ռուսաստան իր օրը, թագաժառանգ իշխան Կարլի հետ, նրան տեղաւորելու համար Պետերբուրգի պետական ուսումնարաններից մէկի մէջ: Իշխանը դիտարկութիւն ունի մի քանի օր Վիեննա մնալ Ֆրանց-Յոզեֆի կայսրի հետ տեսակցելու համար: Վիեննա արդէն հասաւ իշխանի աղիւստաններից մէկը, Նիկոլայ Մատանովիչ, որը կը սպասի նրան այնտեղ, և յետոյ կուղևորվի Գրեվի Ռուսաստան: Մատանովիչ Չեքոսլովակիայի դեսպան է նշանակված Պետերբուրգում և թագաժառանգ Կարլի ղեկավարում:

—Լիւքսեմբուրգ, հոկտեմբերի 6-ից, հեռագրում են հետեւեալը: Ներկ երեկոյեան, երբ պոլիցիականները հողային լիզայի տեղական բաժնի գանձապահին բանաւ են տանում, անկարգութիւնները նորոգվեցան: Հաւաքված ամբոխը անդադար քարեր էր գցում մինչև անգամ այն ժամանակ, երբ կալանաւորված արդէն բանտում էր նըտեցրած: Պոլիցիականները, վերջապէս, ստիպված էին հրացաններ արձակել: Վերաւորվածների մէջ գտնվում է և մէկ երկուստարդ տիկին: Որովհետև անկարգութիւնները դեռ եւ շարունակվում են, այդ պատճառով քաղաքային իշխանութիւնները հեռագրով պահանջեցին պոլիցիայի կազմակերպութիւնը զօրեղացնել:

—Լոնդոնից հեռագրում են լրագիրներին, հոկտեմբերի 6-ին, որ երեք գնդեր հրաման ըստացան մտնել Իրանդիւ: Լօրէ-կանդէր կարգադրեց Պարնէլին հրաժարեցնել Ուելլիոնան կոմսութեան հաշտարար դատաւորների թըւից: Այլ տեղեկութիւնների համաձայն Կուրլիում երէկ նոր անկարգութիւններ պատահեցան. ամբոխը մի քանի անշնան լրագիրների խմբագրութիւնների պատահանները կտրտեց, և քարեր գցելով ստիպեց պոլիցիային հեռանալ: Կէս ժիշից յետոյ զինուորական ուժեր պահանջեցան:

—Լոնդոնից հաղորդում են լրագիրներին հետեւեալը: Լոնդ կայ, որ Կուրլիում փորձել են սպանել Հերբերտ Գլադստօնին, առաջին միւնիստրի օրդոն, որը նորեւրում Ֆորստերի օգնական նշանակվեցաւ Իրանդիւն կառավարելու համար: Ներքին գործերի միւնիստր, սըր Վերնօն Գարկուր մէկ սպառնալից նամակ ստացաւ Պարնէլի կալանաւորութեան պատճառով: Մէկ լրագրի թղթակցից տեսակցութիւն ունէր Պարնէլի հետ բանտում: Այդ տեսակցութեան ժամանակ Պարնէլ յայտնեց այն համոզմունքը, որ իր բանտարկութիւնը չի վնասի իրանդական գործին, և որ ժողովուրդը մինչև վերջը կը կատարի իր

պարտաւորութիւնը. ինքն չէ կարծում, որ կառավարութիւնը վճռել է ջնջել հողային լիզան: Իրանդական ֆէրմները մեծամասնութիւնը վճռեց վարձական վճարը չը տալ հողատերերին մինչև որ Պարնէլ ազատված չը լինի:

—Կ. Պոլսից լրագիրներին հաղորդում են: Ինչպէս յայտնի է, պետութիւնների ներկայացուցիչները առաջարկեցին Բ. Կրան մասնաւոր յանձնաժողով նշանակել Հայաստանում վերանորոգութիւններ մտցնելու համար: Բ. Կուրը համաձայնվեց այդ առաջարկութեան հետ, պատրաստակարգութիւն յայտնելով, ըստ կարիւ կարողութեան բաւականացնել բոլոր պետութիւնների պահանջները: Արդէն մի քանի օր առաջ, լրագիրները հաղորդում էին, որ Մուխտար-փաշան է նշանակված Բ. Կրան գլխաւոր կոմիսար Հայաստանում:

—Հ. Եւրոպի լրագիրները հաղորդում են, որ պապը սուրբ Պետրոսի աղօթարաններից մէկում ընդունեց Հ. Եւրոպի հաւաքված ուխտաւորներին: Պապը տեսնվեցաւ նրանց հետ կարգիւններով չըջապատված լինելով: Նա ճառ խօսեց, որի մէջ յայտնեց, որ ուրախ է տեսնելով իրան խաղաղների մէջ և գտնելով նրանց մէջ միմիկութիւն: Նա ապրում է թշնամիների մէջ. անբարոյական մամուլը աշխատում է նրա վարկը վայր գցել և թուլացնել նրա իշխանութիւնը, սպառնալով մինչև անգամ Վատիկանը դրաւել և պապին բանտարկել կամ արքայադէպ: Վերջացնելով իր խօսքերը, պապը հաւատացեալներին կուրի հրաւիրեց: «Վենք հողերը վերջով կը պատերազմենք և կը յաղթենք, ասաց նա: Որհնում եմ ձեզ և իմ հայրենիքը—Իտալիան:» Բաղաձըր այդ օրը բոլորովին հանգիստ էր: Ուխտաւորների ընդունելութիւնը, որոնց թիւը երեք հազարից աւելի էր, շարունակվում էր մինչև կէսօրվայ երկու ժամը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկացիների զաղթականութիւնը Հին-Ալիսարում այս տարի ահագին չափերի հասաւ: Մօտ 100,000 ամերիկացիներ թողին իրանց հայրենիքը, և որ նշանաւորն է, բոլորը Եւրոպա հասան մեծ փողերով: Ամերիկական բերձայի դրեկտորը, Լոնդոնում, հաշուեց, որ կըր հաշուվ իւրաքանչիւր զաղթական իր հետ բերեց 4000-ից մինչև 5000 ֆունտ ստերլինգ, իսկ ընդհանուր թուով այդ կը կազմի 500 միլիոն դոլար գումար: Ֆրիանտիստները հաւատացնում են, որ չը նախկինով երկրի հարստութեանը այդպիսի գումարների կուրելը կարող է նկատելի կերպով ազդել Ամերիկայի տնտեսական դրութեան վրա:

Փարիզի լրագիրները հաւատարմում են, որ, իբր թէ, նախկին կայսրուհի Լեզինիա, իր վերջին անգամ Փարիզով անցկենալու ժամանակ, կտակ թողեց այնտեղի մի նստարկուսի մօտ, որով նա իր ժառանգ է նշանակում իշխան Ժիւրովի մեծ որդուն, իշխան Վիկտոր Նապոլեօնին: Մատնացոյց անելով նրան, որպէս ցեղի գլխաւորի վրա, նա կտակեց նրան իր թողած բոլոր կարողութիւնը գործածել բոնապարտեանների գործը պաշտպանելու համար:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 13 հոկտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ռ., երկրորդ 92 ռ. 25 կ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 92 ռ. 50 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 216 ռ., երկրորդ 212 ռ. 75 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 89 ռ. 62 կ., երկրորդ 89 ռ. 62 կ., երրորդ 89 ռ. 75 կ., ռսկի 7 ռ. 66 կ.: Ռուսաց 1 ռ. Լոնդոնի վրա արժէ 25,87 պէնս, Ամստերդամի վրա 130,50 պէնս, Ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 221 մարկ, Փարիզի վրա արժէ 273 ֆրանկ: Բօրայի արամադրութիւնը թղթ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՐԱՐ ԱՐԴՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՆՈՒԹԵԱՆ

(Հրապարակական դասախօսութիւնք Ա. Երիցեանի):

Լեզուների ծագման և դարգացման օրէնքները: —Թէ այժմ ինչ դրութեան մէջ է հայոց լեզուի ծագման խնդիրը:—Գրաբառ լեզուի սկզբնական ձևերը վերականգնացնելու մի փորձ և այս միջոցաւ ազգիս նախնական կենաց նկարագրութիւնը:—Բանաստեղծական այլաբանութիւն և առասպելեաց ծագումն:—Առասպելաբանութեան դարգացումն բանաստեղծութեան մէջ և հին հայոց դիւցազնական վիպասանութիւնը:—Պ. Լամբի վերջին հետազոտութիւնները և Մովսէս Խորենացու պատմութեան աղբիւրների մասին:—Գիրքը և սրա ծագման մասին ընդհանրապէս:—Նախնի հայոց սկզբնական գիրը:—Թէ այժմ ինչ դրութեան մէջ է Հայաստանում գտնուած բեռնագրերի ընթերցանութիւնը:—Թէ որ աստիճանի է եղած Տուրանական, Ամիսական և Արիական ազգերի ազդեցութիւնը հիթանոսական հայերի կենաց վրա:—Հայոց հիթանոսական կենեքից մնացած գրաւոր յիշատակները:—Հայաստանի քաղաքական և բարոյական դրութիւնը IV դարում:—Քրիստոնէութեան ծաւալումն և ասորական-բիւզանդական ազդեցութիւնը հայոց գրականութեան վրա IV և V դարերում:—Հայոց այբուբենի ծագման խնդիրը և Ս. Մեսրոպայ տուած կատարելագործութիւնը:—Ս. Մեսրոպայ առաջին և երկրորդ աշակերտները արեւմտեան փիլիսոփայական ուսմանց ազդեցութեան ներքոյ:—Սուրբ Գրքի թարգմանութիւնը և նրա զընահատութիւնը ներկայումս:—Ոսկի դարի գրաբառը և նրա ժամանակակից աշխարհագրի հետքերը:—Հայոց գրականութիւնը սկսում է ընկնել VI դարում:—Հերակլիտոսութեանց հետ մաքառիլը և հայոց կրօնական և աստուածաբանական մտեւնագրութիւնը V դարից մինչև X դարը:—Հայաստանի կրթութեան աստիճանը այդ միջոցում:—Արաբական լուսաւորութիւնը:—Պատմումն դէպի եկեղեցեաց միաւորութիւնը XI դարից մինչև XIV դարը:—Բիւզանդիոյ և Հռոմից կաթոլիկութեան ազդեցութիւնը:—Խաչակրաց պատերազմների նշանակութիւնը հայոց պատմութեան համար:—Տրամաբանութեան մուտքը կրթութեան մէջ (բացիտալիզմ):—Հայոց գրականութեան արժանիքը դարը:—Գրաբառի վերջնական անկումն և ժողովրդական բարբառների հետագայ դարգացումն:—Հայոց զաղթականութիւնը և սորա հետեւանքները լեզուի և գրականութեան համար:—Հայոց տաղաչութեան սկզբնաւորութիւնը և գրաբառի վերականգնացնելու ջանքերը:—Վենետիկի Միխիլայանց և այլոց ծառայութիւնները:—Նոր գրականական լեզու ներկայ հայոց ի Ռուսիայ և ի Տաճկաստան:—Լեզուի և գրականական ուղղութեան մէջ գտնուած էական տարբերութիւնները Ռուսահայոց և Տաճկահայոց:—Հայոց գրականութեան ներկայ դրութիւնը վիպասանութիւնը ընդհանրապէս և ժողովրդական բանաստեղծութիւնը, դիտական և ուսումնական գրականութիւնը:—Հայոց տաղաչութեան վիճակագրութիւնը:—Հայոց եղբրեւական տպագրութիւնը, նորա պատմական տեսութիւնը և ներկայ դրութիւնը:

Վերջաբան:

Դասախօսութիւնները կը լինին Պ. Արծրունու թատրոնական դահլիճում հոկտեմբերի 21, 23, 28 և 30-ին: Սկիզբը ժամի 7 1/2 երեկոյեան:

Չորս դասախօսութեանց տոմսակները միասին և առանձին առանձին կարելի է ստանալ պ. Մատաւրեանի խանութում և թատրոնի կասսայում: Տոմսակների գներն են 1 ռուբլից սկսած մինչև 15 կօպէկ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ երեկոյական ԼՕՏՕԹԻՓԻ լիսու ըհալական ուսումնարանի հայ-աշակերտների հրատարակութեամբ: Վաճառվում է (յօգուտ նոյն դպրոցի աշակերտաց ապագայ ՀԱՅՏԱՐԱՐ ԳՐԱԿԱՆՆՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ, ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ գրալաճառանոցներում և կուկրայի կամրջի վրա պ. Մատիւնեանցի խանութում: Գներն է 50 կօպ.: 6—6

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.